Արձանագրություն թիվ 2

ՀՀ Կոտայքի մարզի Գեղաշենի Ռազմիկ Ստեփանյանի անվան միջնակարգ դպրոցի ընդհանուր ծնողական ժողովի 2018 թվականի սեպտեմբերի 12-ին կայացած նիստի:
Ժողովին մասնակցում էին դպրոցի տնօրեն Նաիրա Բաբայանը, տնօրենի տեղակալները, դասղեկները , ծնողները:

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

1. Տնօրենի հաղորդումը նախորդ ուսումնական տարվա արդյունքների և նոր ուսումնական տարվա անելիքների մասին
2. Հաշվետվություն 2017-2018 ուստարվա ընթացքում ծնողխորհրդի կատարած աշխատանքների վերաբերյալ:
3. Դպրոցի ծնողխորհրդի և ծնողխորհրդի նախագահի ընտրություն:
4. <<Տաք սնունդ>> ծրագրի կազմակերպման հարցը:

1. Լսեցին.- Նախորդ ուսումնակնա տարվա արդյունքների և նոր ուսումնական տարվա անելիքների հարցը:

Ելույթ ունեցավ դպրոցի տնօրեն Նաիրա Բաբայանը՝ ամփոփելով 2017-2018 ուստարին: Նա տեղեկացրեց, որ կոմպլեկտավորվել է 2 առաջին դասարան՝ 66 աշակերտով, նախակրթարանի 2 խումբ: Արդյունքում դպրոցում կոմպլեկտավորվել է 23 դասարան 539 աշակերտով: Աշակերտ ուսուցիչ հարաբերակցությունը դպրոցում կազմել է 1:14, ուսուցիչների միջին ծանրաբեռնվածությունը կազմում է 20.3 դասաժամ: Նշանակվել են դասղեկներ, առարկայայկան մեթոդմիավորման նախագահներ, խմբակների ղեկավարներ: Հաստատվել են նրանց տարեկան աշխատանքային պլանները, ծրագրերը, դասղեկի օրագրերը: Մեթոդմիավորումների առաջարկությունների հիման վրա կատարվել է դպրոցական բաղադրիչ ժամաքանակի բաշխում, կազմվել է 2017-2018 ուստարվա ուսումնական պլանը, կատարվել է դասաբաշխում, կազմվել և հաստատվել է դասացուցակը, 217-2018 ուստարվա միջոցառումների համադպրոցական պլանը:
Տարվա ընթացքում խիստ վերահսկողություն է սահմանվել աշակերտների ուշացումների , անհարգելի բացակայությունների նկատմամբ , ուշադրության կենտրոնում են եղել թույլ, չառաջադիմող աշակերտները, որոնց նկատմամբ ցուցաբերվել է անհատական մոտեցում: Պարբերաբար կատարվել են դասալսումներ, կազմակերպվել են բաց դասեր, որոնք վերլուծվել են մեթոդմիավորումների նիստերում: Աշակերտներն ակտիվորենն մասնակցել են ընթերցանության և ասմունքի օլիմպիադաներին, մրցույթներին, <<Կենգուրու>>, <<Մեղու>> մրցույթներին: Տարվա ընթացքում կաղմակերպվել են բազմապիսի գեղարվեստական, գրական, երաժշտական և սպորտային միջոցառումներ: Դպրոցում դաստիարակության առանցքային ուղղություններից մեկը սովորողների ռազմահայրենասիրական դաստիարակությունն է: Շատ են կարևորվում աշակերտների արտադասարանական կրթությունը, դաստիարակությունը, որոնց շնորհիվ բազմաթիվ են դարձել սպորտային տարբեր մրցաշարերին մեր դպրոցի ակտիվ մասնակցությամբ գրանցված հաջողությունները: Ուստարվա ընթացքում իրականացվել է բյուջեի ճիժտ պլանավորում. ֆինանսական մուտքերի և ծախսերի իրատեսական

համամասնություններով առաջացած, տնտեսած խնայողություններով իրականացվում են դպրոցի ընթացիկ վերանորոգման աշխատանքներ, բարելավվում են շենքային պայմանները, նյութատեխնիկական բազան: Շարունակական աշխատանք է կատարվում ուսումնական միջավայրի կատարելագործման ուղղությամբ:
Ն. Բաբայանը նշեց, որ դպրոցում իրականացվող բոլոր աշխատանքները հետապնդում են միասնակն նպատակ. ստեղծել անհրաժեշտ ուսումնական միջավայր մատուցվող կրթական ծառայությունների բարձր որակ ապահովելու համար:

Որոշեցին.- Հավանություն տալ տնօրենի զեկուցմանը և կատարված աշխատանքները գնահատել գերազանց:

2.Լսեցին.- <<Հաշվետվություն 2017-2018 ուստարվա ընթացքում ծնողխորհրդի կատարած աշխատաքնների վերաբերյալ>> հարցը՝ ծնողական խորհրդի քարտուղար Հրանուշ Ավագյանի հաղորդմամբ:
Դպրոցի ծնողխորհուրդը ձևավորվել է տարեսկզբին դասարանական 23 ծնողխորհուրդների նախագահներից: Տարեսկզբին կատարվել է սոցիալապես անապահով և ծնողազուրկ աշակերտների ցուցակի ճշտումը՝ կառավարության կողմից հատկացված գումարի շրջանակներում կարիքավոր աշակերտներին անվճար դասագրքեր տրամադրելու համար: Դպրոցի ծնողխորհուրդը, դասարանական ծնողխորհուրդները ակտիվորեն մասնակցել են դպրոցական արձակուրդների ժամանակ աշակերտների հանգստի և ժամանցի կազմակերպման գործընթացին՝ կարևորելով էքսկուրսիաների, կինոդիտումների, թատրոն, մշակույթի օջախներ , ցուցահանդեսներ այցելությունների դերը գեղագիտական դաստիարակության գործում, նպաստել է դպրոցի և ընտանիքի կապերի ամրապնդմանը: Ծնողխորհուրդը իրազեկ է երեխաների իրավունքների պաշտպանությանը ուղղված դպրոցի կողմից ծավալվող աշխատանքներին այն հոգատարությանը, որ ցուցաբերվում է յուրաքանչյուր երեխայի նկատմամբ:

Որոշեցին.- Հավանություն տալ ծնողական խորհրդի կողմից իրականացված աշխատանքների հաշվետվությանը:

3.Լսեցին.- Դպրոցի ծնողխորհրդի , ծնողխորհրդի նախագահի և քարտուղարի ընտրության հարցը:

Դպրոցի ծնողական խորհուրդը ձևավորվում է դասարանների ծնողական խորհուրդների նախագահներից: Արդեն տեղի են ունեցել դասարանների ծնողական ժողովները և ընտրվել են 23 դասարանների ծնողխորհուրդների նախագահներ, որոնք էլ ձևավորում են դպրոցի ծնողական խորհուրդը: Ծնողական խորհրդի կողմից նոր ուսումնական տարվա համար առաջադրվում և ընտրվում են խորհրդի նախագահ և քարտուղար: Ն. Բաբայանի առաջարկությամբ ձևավորվեց հաշվիչ հանձնաժողով՝ կազմված երեք անդամից.

1. Թեհմինե Պետրոսյան
2. Ամալյա Մկրտչյան
3. Լիլիկ Հովհաննիսյան

Տեղի ունեցավ թեկնածուների առաջադրում : Մարինե Ծառուկյանը առաջադրեց Հրանուշ Ավագյանի թեկնածությունը, Մարինա Թորոյանը Տաթևիկ Ազատյանի թեկնածությունը: Տաթևիկ Ազատյանը հայտնեց ինքնաբացարկ : Տեղի ունեցավ փակ գաղտնի քվեարկություն , որի արդյունքում 23 կողմ ձայնով ծնողական խորհրդի նախագահ ընտրվեց Հրանուշ Ավագյանը:

Այնուհետև տեղի ունեցավ քարտուղարի թեկնածության առաջադրում : Անի Դավթյանը առաջադրեց Տաթևիկ Ազատյանի թեկնածությունը, որը միաձայն ընտրվեց ծնողական խորհրդի քարտուղար:

Համադպրոցական ծնողական ժողովը հաստատեց ծնողական խորհրդի հետևյալ կազմը.

1. Ավագյան Հրանուշ / խորհրդի նախագահ/– 6-րդ <<Ա>>
2. Ազատյան Տաթևիկ / խորհրդի քարտուղար/- 1-ին <<Բ>>
3. Գրիգորյան Լիլիթ 1-ին <<Ա>>
4. Գուլամերյան Արմինե 2-րդ <<Ա>>
5. Բաղալյան Անի 2-րդ <<Բ>>
6. Վարդանյան Լիլիթ 3-րդ <<Ա>>
7. Մաթևոսյան Մարգարիտա 3-րդ <<Բ>>
8. Անտոնյան Թեհմինե 4-րդ <<Ա>>
9. Հովսեփյան Ծաղիկ 4-րդ <<Բ>>
10. Պապյան Լիլիթ 5-րդ <<Ա>>
11. Ծառուկյան Մարինե 5-րդ <<Բ>>
12. Վարդանյան Անուշ 6-րդ <<Ա>>
13. Ազիզյան Մարիամ 7-րդ <<Ա>>
14. Հարությունյան Աստղիկ 7-րդ <<Բ>>
15. Աբրահամյան Տաթևիկ 8-րդ <<Ա>>
16. Հովհաննիսյան Լիլիկ 8-րդ <<Բ>>
17. Թորոյան Մարինա 9-րդ <<Ա>>
18. Մկրտչյան Ամալյա 9-րդ <<Բ>>
19. Բաբայան Տաթևիկ 10-րդ <<Ա>>
20. Դավթյան Անի 10-րդ <<Բ>>
21. Պետրոսյան Ռուզաննա 11-րդ <<Ա>>
22. Պետրոսյան Թեհմինե 11-րդ <<Բ>>
23. Հովհաննիսյան Լուսինե 12-րդ <<Ա>>

Որոշեցին.- Հաստատել 2018-2019 ուստարվա ծնողական խորհրդի վերոնշյալ կազմը Հրանուշ ավագյանի նախագահությամբ և Տաթևիկ Ազատյանի քարտուղարությամբ:

4.Լսեցին.- <<Տաք սնունդ >> ծրագրի կազմակերպման հարցը:

Անցյալ տարվանից դպրոցում իրականացվում է <<Տաք սնունդ >> ծրագիրը: Բացի ՄԱԿ-ի պարենի գրասենյակի կողմից տրվող պարենի / ալյուր, ձեթ, ոլոռ, բրինձ, հնդկաձավար, մակարոն/ ծրագիրը ենթադրում է ծնողական ներդրում երեխաների աճի և զարգացման համար անհրաժեշտ այլ սննդանյութերով սնունդը համալրելու, պատրաստման, օգտագործման , օգտագործումից հետո առաջացած խնդիրները լուծելու համար/ վառելիք, աղ, անձեռոցիկ, լվացող նյութեր և այլն/:

ՀՀ Կոտայքի մարզպետի կողմից առկա է հանձնարարական, որով սահմանված է 100-ից 300 դրամ ներդրման չափ:

Տնօրեն Նաիրա Բաբայանը ասաց,որ դպրոցը կանի ամեն ինչ,որ գործնթացը իրականացվի կազմակերպված,երեխաներին համեղ և ապահով,անվտանգ սնունդ տրվի: Նրանք շնորհակալություն հայտնեցին տնօրենին՝անցյալ տարվա ընթացքում կատարած աշխատանքի համար ,որի շնորհիվ իրենց երեխաները սովորել են ճիշտ սնվել, կերել են սիրով,նույնիսկ ավելի լավ ,քան իրենց տներում:

Որոշեցին.- <<Տաք սնունդ >> ծրագրին որպես ծնողական ներդրում հավաքել 300-ական դրամ գումար և գործնթացի կազմակերպման համար անհրաժեշտ նյութեր, սննդամթերք ձեռք բերել հավաքվող գումարի չափով՝ծնողների կողմից:

Ծնողական խորհրդի նախագահ՝ Հրանուշ Ավագյան

Քարտուղար՝ Տաթևիկ Ազատյան